

# Պատմության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 5 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն**



**Հրահանգ N°1-24 առաջադրանքների համար:**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը ուր դրել եք X նշանը և այնուհետ նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

## 1. Ո՞ր թագավորությունն են նվաճել հիքսոսները:

ա. Ասորեստանի

ծ. Բաբելոնի

գ. Եգիպտոսի

զ. Խեթերի

2. Ո՞ր քաղաքակրթության հուշարձանն է ներկայացված լուսանկարի վրա:



- ա. Աքեմենյան
- ծ. Եգիպտական
- գ. Էտրուսկյան
- դ. Մինոսյան

### 3. Ո՞ր ծովն էին հույներն անվանում «Պոնտոս Աքսենյոս»:

ա. Էգեյան ծովը

ბ. Հոնիական ծովը

գ. Միջերկրական ծովը

դ. Սև ծովը

#### 4. Ինչի՞ հետ էր կապված թվականության հաշվարկումը Հին Հունաստանում:

ա. Օլիմպիական խաղերի

ծ. Տրոյայի գրավման

գ. Աթենքի հիմնադրման

զ. Դելփյան պատգամատան կառուցման

5. Ո՞ւմ և ում միջև հակամարտությամբ է սկսվում քաղաքացիական պատերազմների շրջանը Հոռմում:

ա. Սուլլայի և Պոմպեոսի

ծ. Կեսարի և Սերտորիոսի

գ. Մարիոսի և Սուլլայի

դ. Բրուտոսի և Կեսարի

## 6. Ո՞րն էր Տրայանոս կայսրի գործունեության ամենանշանակալից արդյունքներից մեկը:

- ա. Դակերին պարտության մատնելը
- ծ. Պոնտոսի թագավորության ոչնչացումը
- ց. Տևտրուրգյան ճակատամարտում հաղթանակ տանելը
- զ. Հելլենիստական վերջին պետության նվաճումը



7. Ի՞նչը կարող ենք համարել Քարթլի թագավորության հզորացման ցուցանիշ Փարսման Քվելիի (Իբերացի) օրոք:

- Տ. Քոչվոր սկյութերի ներխուժումների ետ մղելը
- Ծ. Կլարջեթի միացումն և Արտանուշի հիմնումը
- Ճ. Ճորոխի գետաբերանի մոտ ծովի առափնյա շերտին տիրանալը
- Ծ. Ֆազիսի ափերին գտնվող գաղութների ենթակայության տակ առնելը

**8. Ո՞րն էր արևմտյան Եվրոպայում քաղաքային կյանքի քայքայման պատճառը միջնադարի սկզբին:**

ա. Կոլոնատի տնտեսական համակարգի անկումը

ծ. Մետաքսե ճանապարհի տեղափոխումը արևելյան մասով

գ. Բյուզանդիայի կայսրության թուլացումն ու քոչվորների արշավանքները

դ. Հռոմի կայսրության անկումը և ժողովուրդների մեծ վերաբնակեցումը

9. Ո՞ր գրական հուշարձանն է հաստատում թագավորության լուծարումը Քարթլիում VI դարի միջին շրջանում:

- ա. Կոնստանտի-Կախի նահատակությունը
- բ. Սերապիոն Զարգմեղի կյանքը
- գ. Էվստաթի Մցխեթելիի մարտիրոսությունը
- դ. Վրաց և Հայոց բաժանման մասին

## 10. Շիաները Մուննիներից տաբերվում են նաև նրանով, որ նրանք՝

- ճ. Հիջրայի հաշվարկը սկսում են Մուհամմեդի մահվանից
- Ն. Առաջին չորս Խալիֆաների միջև ընդունում են միայն Ալիին
- Շ. Չեն ընդունում Ղուրանի մի քանի սուրաներ
- Թ. Հաջի կատարումը չեն կապում Մեքքայի հետ

11. Զավթողական արշավանքները սկսելիս առաջին անգամ ո՞ւմ հետ ստիպված եղան մարտնչել սելջուկները:

- ա. Բաղդադի խալիֆայության
- բ. Բյուզանդիայի կայսրության
- գ. Սասանյանների թագավորության
- դ. Ղազնևիների պետության

12. Ի՞նչ փոխանցեց Գրիգոր Բակուրիանիձեն Գիորգի II թագավորին Բյուզանդիայի կայսրության անունից:

ճ. Անակոփիա ամրոցը

Ն. Կյուրոպաղատի կոչումը

Շ. Բերդաքաղաք Կարսը

Չ. Մագիստրոսի տիտղոսը

13. Ո՞ր անվանի վրացի փիլիսոփան էր գործունեությունն վարում Գելաթիի ակադեմիայում XII դարում:

ա. Եփրեմ Փոքրը

ბ. Իոանն Պետրիցին

գ. Էքվթիմե Մթածմինդացին

դ. Պրոխորե Քարթվելին

14. Թամար թագուհու հետ միասին ութն ր են պատկերված Բեթանիայի վանքի որմնանկարի վրա:



ա. Դեմետրե I և Գիորգի III

ბ. Գիորգի III և Գիորգի IV

գ. Գիորգի III և Դավիթ Սուլանը


դ. Գիորգի IV և Դավիթ Սուլանը



15. Սյուս պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը դարձավ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլիսը գրավելու պատճառը:

- Տ. Հանգայի միության վերջնագիրը
- Ծ. Ջենովայի հետ կնքած պայմանագիրը
- Ծ. Լատինական կայսրության խնդրանքը
- Թ. Վենետիկի առևտրական շահերը

16. Ո՞ր պետության հզորության ժամանակաշրջանն է պատկերված քարտեզի վրա:



- ա. Հռենոսյան միության
- ბ. Ֆրանկական թագավորության
- գ. Սրբազան Հռոմեական կայսրության
- դ. Ավստրո-Հունգարական կայսրության

17. «Մենք՝ արքայից արքա Գիորգին, կայացրեցինք այս որոշումը, այն ժամանակ, երբ եկանք մթիուլների մոտ... և զգացինք, որ մեծ անարդարություն ու բռնություն է տեղի ունենում միմյանց միջև և պատժի թեթևության պատճառով հեշտ է դառնում իրար դավաճանելն ու բերդեր ավերելը, սպանությունը, կնոջը ձեռքից տանելը կամ անմեղորեն, անտեղի դուրս անելը և բազմատեսակ Ուլուսոբա ու ոչ մի տեղ չկար արդարություն»:

**Ի՞նչն էր վրացական իրավունքի հուշարձաններից մեկի վերոնշյալ քաղվածքում բնութագրված իրավիճակի գլխավոր պատճառը:**

- ա. Ֆեոդալների ապստամբության հետևանքով թագավորական իշխանության թուլացումը
- բ. Մոնղոլների երկարատև տիրապետությունը Արևելյան Վրաստանում
- գ. Իրանցիների կողմից թագավորության լուծարման արդյունքում ստեղծված անիշխանությունը
- դ. Դադստանի ֆեոդալների հաճախակի դարձած գրոհները այսպես կոչված լեկիանոբան

18. Մյուս պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը նպաստեց մոնղոլների տիրապետության օրոք Մոսկվայի իշխանության հզորացմանը:

- ա. Ալեքսանդր Նևսկիի գործունեությունը
- բ. Օպրիչնինայի ներմուծումը
- գ. Վլադիմիր Մոնոմախի բարեփոխումները
- դ. Մետրոպոլիտի նստավայրի տեղափոխումը

19. Ի՞նչն էր նպաստում Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության միջև քաղաքական դաշինքին XVI դարում:

- ճ. Հաբսբուրգների հզորությունն ու տիրույթների բազմաթվությունը
- Ց. Մեդիչիների ակտիվացումը կենտրոնական Եվրոպայում
- գ. Սափոյական դինաստիայի կողմից Իտալիայի միավորումը
- դ. Հոհենցոլերների ղեկավարությամբ Գերմանիայի ուժեղացումը

**20. Ո՞րն էր Լուի XVI-ի օրոք Ֆրանսիայում ծագած տնտեսական ճգնաժամի պատճառներից մեկը:**

Տ. Հարկերի վճարումը միայն երրորդ դասի դասային կոչումի կողմից

Ծ. Երեսնամյա պատերազմի հետ կապված չափազանց մեծ ծախսերը

Ը. Ռեֆորմացիայի արդյունքում տարբեր շերտերի միջև առաջացած ներքին տարաձայնությունները

Թ. Ժակերիայի հետևանքով գյուղատնտեսության զարգացման խոչընդոտումը

## 21. Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ զարգացած իրադարձությունների հետ կապված ո՞ր դատողությունն է արդարացի:

ճ. Տերմիդորականներին մահապատժի ենթարկելուց հետո յակոբինները հեշտությամբ պարտության մատնեցին միայնակ մնացած ժիրոնդիստներին

Ն. Թագավորին և թագուհուն մահապատժի ենթարկելուց հետո յակոբիններն ու ժիրոնդիստները տերմիդորականներին նույնպես ոչնչացրեցին

Շ. Յակոբիններին մահապատժի ենթարկելուց հետո ժիրոնդիստները պարտության մատնեցին մյուս հակառակորդներին ևս և կանգնեցին իշխանության գլուխ

Ը. Թագավորին մահապատժի ենթարկելուց մի քանի ամիս անց ժիրոնդիստները կորցրեցին իշխանությունը և իշխանության գլուխ կանգնեցին յակոբինները

22. Ովքե՞ր էին մասնակցում 1848-1849 թվականներին Իտալիայում զարգացած հեղափոխական իրադարձություններում:

- ա. Կապուրը և Վիկտոր –Էմանուիլը
- բ. Վիկտոր –Էմանուիլը և Մացցինին
- գ. Մացցինին և Գարիբալդին
- դ. Գարիբալդին և Կապուրը



## 23. Ինչու՞ էր XX դարի 10-ական թվականներին Բալկանները համարվում «ամենապայթյունավտանգ» տարածաշրջաններից մեկը:

ճ. Բալկաններում առկա փոքր պետությունների փոխադարձ հավակնություններին ավելանում էին նաև այս տարածաշրջանի հանդեպ Օսմանյան կայսրության, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի հետաքրքրությունները

Ճ. Ավստրո-Հունգարական կայսրության փլուզումից հետո ստեղծված պետությունները միմյանց հետ ունեին սահմանային բախումներ, իսկ դրանց ետևում կանգնած էին Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը

Ը. Գերմանիայի միավորումը փոխեց ուժային հավասարակշռությունը և նրա դաշնակից՝ Խորվաթիան ու Սլովակիան պատերազմ սկսեցին հարևան Բուլղարիայի դեմ, որը գտնվում էր Ռուսաստանի հովանավորության տակ

Թ. Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի հետաքրքրություններին՝ դեպի օգտական հանածոներով հարուստ այս տարածաշրջանը, ավելանում էր նաև դեպի հարևան երկիրը Հարավսլավիայի վարած ագրեսիվ քաղաքականությունը

24. Ո՞ր դատողությունն է արդարացի Արևելյան Եվրոպայում 1988-1989 թվականներին զարգացած իրադարձությունների հետ կապված:

ճ. ԽՍՀՄ-ի փլուզումը սոցիալիստական ճամբարի այլ երկրներում ևս, ավտոմատ կերպով առաջացրեց նրա իսամաճիկային կոմունիստական վարչակարգերի տապալում

Ն. ԽՍՀՄ-ում սկսված փոփոխությունները նպաստեցին այսպես կոչված թավշյա հեղափոխություններին Եվրոպայի սոցիալիստական երկրների գերակշիռ մասում

Շ. ԽՍՀՄ-ի թուլացումը նպաստեց Ռումինիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում զինված ապստամբության արդյունքում կոմունիստական վարչակարգի տապալմանը

Ը. ԽՍՀՄ-ում իրագործված այսպես կոչված պերեստրոյկան սոցիալիստական ճամբարի անդամ երկրներին անկախություն հայտարարելու հնարավորություն տվեց

### **Հրահանգ №25-28 առաջադրանքների համար**

Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները: Պատասխանները գրանցեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանած իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, համապատասխանաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

25. Ժամանակագրական առումով դասավորեք Հին Արևելքի պետություններում տեղի ունեցած իրադարձությունները:

1. Նինվե քաղաքի գրավումը միդիացիների կողմից
2. Եկբատան քաղաքի գրավումը Կյուրոս II-ի կողմից
3. Երուսաղեմ քաղաքի գրավումը Նաբուգոդոնոսոր II-ի կողմից

26. Ժամանակագրական առումով դասավորեք V դարում Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցած իրադարձությունները:

1. Ֆրանկների քրիստոնեացումը
2. Արևմտահռոմեական կայսրության անկումը
3. Ճակատամարտ Կատալաունյան դաշտերի վրա

27. Ժամանակագրական առումով դասավորեք XVI-XVII դարերում Տրանսիայում տեղի ունեցած իրադարձությունները:

1. «Բարդուղիմեոսյան գիշեր»
2. Անրի IV-ի կողմից Նանտի Էդիկտի հրատարակումը
3. Ռիշելյեի ղեկավարությամբ Լա Ռոշել բերդ-ամրոցի գրավումը

28. Ժամանակագրական առումով դասավորեք XX դարի 20-ական թվականներին Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները:

1. Համընդհանուր վրացական հակախորհրդային ապստամբությունը:
2. «Զինվորական կենտրոնի» ոչնչացումը
3. Վրաստանի անկախության կոմիտեի (ՎԱԿ) կազմավորումը


Հրահանգ N°29 առաջադրանքի համար:

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա եղած տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալները, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

**Առաջադրանք 29: Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում**







## საუბრე უნდა იყოს

**Աշակերտին ուղղած հարցերը.**

**Աշակերտի տված պատասխանները.**

**29.1.** Ո՞վ էր քարտեզի վրա մուգ շագանակագունով նշված պետության կառավարիչը:

**29.1.** Հուլավու Խանը

**29.2.** Ո՞րն էր Թողթամիշի պետության մայրաքաղաքը:

**29.2.** Սարայ- Բերքե

**29.3.** Վրաստանի ո՞ր քաղաքը փրկվեց թշնամու հարձակումից:

**29.3.** Ցխումին

**29.4.** Միջագետքում գտնվող ո՞ր քաղաքը երկու անգամ ենթարկվեց արշավանքի:


**29.4.** Բաղդադը

**29.5.** Ո՞ր պետության հետ ստիպված եղավ պայքար մղել քարտեզի վրա պատկերված պետության կառավարիչը Փոքր Ասիա արշավելիս:


**29.5.** Ռումի սուլթանության հետ

Հրահանգ № 30 առաջադրանքի համար: Ուշադիր վերլուծեք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանեք տրված հարցերին: Պատասխանները գրանցեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:


**Առաջադրանք 30: Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում**




Առաջադրանք 30.



N1



N2



N3

Մակագրություններ պատաստների վրա (ռուսերեն). **N1** «Ուրալը ռազմաճակատին» **N2** «1941, հունիսի 22», «ՆԿՎԴ» (НКВД)» **N3** «Ստալինգրադ»

**հարցերը տես հաջորդ ջում**

## Հարցեր.

(2) **30.1.** Ո՞ր պատմական գործընթացն են արտացոլում բոլոր երեք պաստառները և անվանեք այն պետությունները, որտեղ ստեղծվել են այս պաստառները:

(2) **30.2.** Տրված պաստառներից երկուսը ծառայում են պետություններից մեկի քարոզչական նպատակներին: Նշեք այդ պաստառների համարները և անվանեք այդ պետությունը: Ձեր կարծիքը անպայման հիմնավորեք պաստառների վրա եղած տեղեկատվությամբ:

(2) **30.3.** Ո՞ր պետության քարոզչական նպատակներին է ծառայում մնացած մեկ պաստառը: Ձեր կարծիքը անպատճառ հիմնավորեք պաստառների վրա եղած տեղեկատվությամբ:

(1) **30.4.** Ձեր անվանած երկու պետություններից, ո՞րն է հաղթանակ տարել պաստառների վրա ներկայացված պատմական գործընթացում:

Հրահանգ № 31 առաջադրանքի համար:

Ուշադիր կարդացեք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնեք տեքստը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրանցեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 19:

**Առաջադրանք 31: Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում**



## Հասված «Քարթլիս ցխովրեաբայից» («Քարթլիի կյանքը»)

Այս Գիորգին տիրացավ իր ամբողջ կալվածքներին ու թագավորությանը իր պատանեկության տարիներին, քանի որ երբ թագավոր դարձավ տասներկու տարեկան էր:

Այդ ժամանակ առանձնացավ նրանից Հերեթ-Կախեթի երկիրը և ազնվատոհմիկների դավաճանությամբ գերեվարված էին երիսթավները, այդ երկրին կրկին տիրացան նախկին տերերը:

Նրա թագավորելու յոթերորդ տարում եկավ Բարսեղը՝ հույների թագավորը, Հունաստանի և մյուս երկրների անթիվ զորքով: Գիորգի թագավորը մեծ զորքով դուրս եկավ նրան դեմ: Երկու կողմն էլ միմյանց դեմ պայքար չսկսելով, օրեր շարունակ ճամբարեցին Բասիան երկրում: Եվ նահանջեց Գիորգի թագավորը,

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

եկավ և այրեց քաղաք Օլթիսին, այնտեղից եկավ Կուլա, իսկ Հունաստանի թագավորը հետապնդեց նրան և վրա հասավ ետևից: Հավաքվեցին Գիորգի վերջապահ և Բարսեղի առաջապահ զորամասերը: Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ գյուղի մոտ, որը կոչվում է Շիրիմնի: Երկու կողմն էլ բազմաթիվ զոհ տվեց: Վերջապահ զորամասի պայքար մղելու մասին լուրը ուշ հասավ Գիորգի թագավորին: Այդ ժամանակ հրաման արձակեց և իր զորքը շտապ պատրաստվեց: Եկավ նաև ինքը՝ Գիորգի թագավորը, քանի որ շատ անսասան ու անվախ էր, իր բազմաքանակ ողջ զորքի հետ միասին: Իր ողջ զորքով այդտեղ եկավ նաև Բարսեղ թագավորը: Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Զոհվեցին շատ հույներ: Ճակատամարտն այնպես էր ընթանում, որ Բարսեղ թագավորը պատրաստվում էր փախուստի

**Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում**

դիմել, սակայն վրացիները երկչոտություն ցուցաբերեցին, շրջվեցին և նահանջեցին, նրանց հետապնդեցին հույները և սպանեցին շատերին սրերով: Հասավ բանակը Արտան, գերիներ վերցրեցին ու ավերեցին Արտանը: Գիորգի թագավորը գնաց և հասավ Թրիալեթի: Կրկին անգամ հանդիպեցին, քանի որ Գիորգի թագավորը ուժեղացավ և ավելացավ նրան ուժ Կախեթիից և Հերեթիից, սակայն խանգարեցին երկրորդ ճակատամարտը: Վերադարձավ Բարսեղ թագավորը Թրիալեթիից, անցավ Ջավախեթին ու Արտանը: Կրկին անգամ ավելի ուժգին ավերեց այդ երկրները, այնուհետև գնաց և ձմեռն անցկացրեց քաղաք Տրապիզոնի մոտակայքում: Միմյանց այցելում էին առաքյալներ սեր և հաշտություն հաստատելու համար:

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

Նորից վերադարձավ Բարսեղը, պահանջում էր երկիրն ու բերդերը ու խոստանում հաշտություն ու խաղաղություն: Գիորգի թագավորը ուղարկեց Ջվիադ երիսթավիին իր զորքով և հրամայեց, որ հաշտություն խոստանալով մի փոքր ժամանակ պահի էդտեղ, իսկ ինքը հզոր զորքով գնաց նրանց հետևից և մտածում էր այսպես. «Եթե Բարսեղ թագավորը հաշտություն կամենա, թող այդպես էլ լինի, իսկ եթե՝ պատերազմ, ապա պատրաստ լինենք դրան ևս»: Նրանք, ովքեր հաշտություն չէին ուզում պատրաստվեցին պայքարի, եկավ Բարսեղ թագավորի զորքի մոտ և սկսեցին պայքարը: Երբ ճակատամարը սկսվեց, վրացիների զորքը կրկին փախուստի դիմեց և շատերը զոհվեցին թրերով, ոմանք էլ գերի ընկան: Տարան մեծ քանակությամբ թագավորական գանձ, որն իր մոտ էր:

**Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում**



Նորից սկսեցին հաշտություն խնդրել, այնպես ինչպես սկզբից, քանի որ վախենում էին Հունաստանում ուրացումից: Խաղաղություն ստեղծվեց և հաշտություն կնքեցին: Գիորգի թագավորը որպես պատանդ ուղարկեց իր երեքամյա որդուն՝ Բագրատին, ազատեց բերդերն ու տվեց երկիրը, որը Դավիթ Կյուրապաղատի ձեռքում էր: Գնաց Բարսեղ թագավորը իր հետ որպես պատանդ տանելով Բագրատ արքայազնին: Երդումով խոստացավ. «Երբորդ տարում ետ կուղարկեմ որդուդ»: Երեք տարի մնաց թագավորանիստ քաղաք Կոստանդնուպոլսում և ինչպես և խոստացել էր երբորդ տարում ետ ուղարկեց:

Երբ հասավ իր հայրենիք ու թագավորություն, նրան մինչև իր հայրենիքի սահմանները ուղեկցում էր Արևելքի կատաբանը: Երբ շրջվեց, որ ետ վերադառնա

մոտեցավ մանդատուրը և տվեց կատաբանին Կոստանդին թագավորի նամակը, ուր գրված էր. «Աստծո նախախնամությամբ մահացավ իմ եղբայր Բարսեղ թագավորը և նրա փոխարեն ես դարձա թագավոր ամբողջ Հունաստանի: Հիմա այնտեղ, որտեղ էլ լինի Բագրատը՝ Աբխազների թագավոր Գիորգիի որդին, շտապ ետ ուղարկեք, և ինձ մոտ բերեք»:

Իսկ նա հենց կարդաց, անհապաղ հրամանը կատարելով շրջվեց և հետապնդեց: Երբ մոտեցավ տեսավ, որ բազում մարդիկ են նրան դիմավորում՝ ավագանիներ, էրիսթավներ, Տաոյի ազնվատոհմիկներ, մեսիսեր ու վրացիներ, որոնք անթիվ էին: Ետ նայեց և ասաց մանդատուրին, որը եկել էր. «Եթե կարող ես դու վերադարձրու, ես դա անել չեմ կարող»:

**Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում**

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

Երբ հասավ Բագրատն իր հոր՝ Գիորգի թագավորի մոտ, նրանց տանը՝ Քութախիում երբ տեսան առանձնահատուկ կերպով ուրախացան և Աստուծոց շնորհակալ եղան: Այդ ժամանակ քրոնիկոնի երկու հարյուր քառասունհինգն էր:

րանից հետո պատրիարք Մելքիսեդեկը գնաց Կոստանդնուպոլիս Կոստանդին թագավորի մոտ: Ընդունեց նրան հույների թագավոր Կոստանդինը և տվեց եկեղեցիների զարդեր, սրբապատկերներ և խաչեր: Եկավ իր երկիր ու հոտ, գյուղեր գնեց Տաոյում, Կլարջեթիում, Ջավախեթիում ու Կոլայում և նվիրեց Սուրբ մայրաքաղաք Մցխեթային Սվետիցխովելիին:

Երկու տարի անց մահացավ Գիորգի թագավորը, որը համակված էր բարությանը, դեռ երիտասարդ,

այնպիսին ինչպիսին չի եղել ոչ ոք իր պապերի միջև՝ երիտասարդությամբ, կազմվածքով, արիությամբ, գիտելիքով լի ու ողջ պետության կառավարմամբ: Քրոնիկոն երկու հարյուր քառասունյոթին, օգոստոս ամսվա տասնվեցին, Թրիալեթի երկրում, այն տեղում որը կոչվում է Մղինվարներ: Սուգ ու տխրություն թողեց իր հայրենիքի ու թագավորության բոլոր բնիկներին: Բոլորը սգում էին նրա բարի ու երիտասարդ լինելու համար: Տարան և հուղարկավորեցին Քութախիի տաճարում: Ուներ չորս զավակ, որդիները՝ Բագրատն ու Դեմետրեն, դուստրերը՝ Գուրանդուխտն ու Կատան:

Մեծ արքա Գիորգիի մահվանից հետո ողջ հայրենիքի ու թագավորության թագավոր դարձավ ինը տարեկան Բագրատը:

Անցում հարցերին. [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

**Հարցերը տես հաջորդ էջերում**

*հարցեր.*

(1) **31.1.** Ըստ աղբյուրի, ովքե՞ր էին իրականացնում տեղական կառավարումը Կախեթ-Հերեթիում, այն բանից հետո երբ այդ շրջաններն անցան Բագրատ III-ի տնօրինության տակ:

(1) **31.2.** Եթե դուք լինեիք Գիորքի թագավորի պալատական մեծամեծներից, խորհուրդ կտայիք արդյո՞ք նրան շարունակել պայքարը Շիրիմնի ճակատամարտից հետո օժանդակ ուժ ստանալու պատճառով: Անպայման հիմնավորեք Ձեր կարծիքը:

(1) **31.3.** Վրաստանի ո՞ր շրջանի բնիկներն են նկատի առնվում մատենագրի խոսքերում՝ «վրացի ազնվատոհմիկները»:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-րդ էջին](#)

(1) **31.4.** Ըստ աղբյուրի n<sup>o</sup> թվականին վերադարձավ Բագրատ արքայագնը հայրենիք: Ձեր կարծիքը հիմնավորեք աղբյուրում եղած տեղեկատվության հիման վրա:

(2) **31.5.** Ըստ աղբյուրի n<sup>o</sup> վ էր հաշտության պայմանագիրը կնքելու նախաձեռնողը և ինչո՞ւ էր նա շտապում կնքել հաշտության պայմանագիրը:

(2) **31.6.** Ո՞ր երկիրն էր (անվանեք կոնկրետ պատմական շրջանը) պահանջում Բարսեղը և ինչի՞ հիման վրա:

(2) **31.7.** Ըստ աղբյուրի, ի՞նչ պայմաններ ստիպված եղավ կատարել Գիորգի թագավորը պայքարներում պարտվելուց հետո:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-րդ էջին](#)

(2) **31.8.** Աղբյուրից բերեք երկու մեջբերում, որոնք հաստատում են, որ Գիորգի թագավորի թագավորությունում եղել են Բարսեղի հետ պայքար մղելու ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ:

(2) **31.9.** Ըստ աղբյուրի, որն էր «Արևելքի Կատաբանին» նոր հրաման ուղարկելու կոնկրետ պատճառը և ինչո՞ւ նա չկրողացավ այն կատարել:

(2) **31.10.** Ի՞նչ կոնկրետ արդյունքով ավարտվեց պատրիարքի այցը Կոստանդնուպոլիս և Ձեր կարծիքով ո՞ր քաղաքական թե մշակութային ասպեկտներով էր պայմանավորված այցի նման ավարտը:

(3) **31.11.** Աղբյուրում եղած տեղեկատվության վրա հենվելով, առանձնացրեք Շիրիմնի մոտ տեղի ունեցած ճակատամարտի երեք փուլ: (**Պատասխանների թերթիկում անպայման համարակալեք պայքարի փուլերը**)

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-րդ էջին](#)

Հրահանգ № 32 առաջադրանքի համար:

Ուշադիր կարդացեք ստորև տրված առաջադրանքը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրանցեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Բոլոր հարցերին տվեք լիարժեք և սպառիչ պատասխան: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

## Առաջադրանք 32: Բանավեճի թեմայի սահմանում

(1) **32.1.** Ո՞ր կոնկրետ թեման քննարկելիս կկիրառեիք №31 առաջադրանքում տրված պատմական աղբյուրը՝ հատված «Քարթլիս ցխովրեբայից» («Քարթլիի կյանքը»):

(1) **32.2.** Դասին քննարկելիք թեմայի կարևորագույն հարցը նախատեսելով, ձևակերպեք բանավեճի թեմայի վերնագիրը:

(2) **32.3.** Ձևակերպեք երկու այլընտրանքային դիրքորոշում, որոնք կարող են առաջանալ բանավեճի ընթացքում: